

Անվերջ փորձով կը խուզարկէր: Անոր առէք իր անկողինն,
 Աւ իր կինն՝ ըր տարէք դամբարանէն: Ան պիտի իր
 Անտոնիոսին քովը թաղուի. աշխարհէն վրայ ոչ մէկ չի բխում
 Պիտի իր մէջ ընդգոգէ զոյգ մը այսքան մեծահաշակ:
 Անոնց նըման բարձրանալու ղրպուածներ կ'ազդեն նոյն իսկ
 Զանոնց նիւթով՝ առթողին վրայ, ու անոնց պատմութեան մէջ
 Արգահատանքը նոյնքան բաժին ունի որքան փառքն
 Անոր որ զիրենք ողբի ենթարկեց: Մեր զօրքերուն
 Բանակը ծանր Հանդէսով պիտի ներկայ գտնուի
 Դամբարանէն յուզարկին: Աւ յետոյ Հռոմ՝ Դոյաբէլլա՝,
 Եկուր, նայէ՛ որ վեհ շուք՝ ու կարգ տրուի այս մեծ
 Հանդիսութեան:

Թարգմ. Գ. ՓԱՌՆԱԿ՝

Վ. Ե. Բ. Զ.

ՄԻՒԿԱՆՁԱՊԵՒ ՅՈՒՄԵՆԱՆԸ

Աւարտութեամբ կ'իմանանք որ Հիւրվան-
 դադէի յօրեկեանը տօնելու համար կ'այսուած
 է Թիֆլիսի մէջ կարգադիր մասնախումբ մը՝
 նախագահութեամբ Պ. Համբարձում Գեղեթե-
 կանի: Այդ մասնախումբը արդէն որոշեր է որ
 յօրեկեանը տեղի պիտի ունենայ մայիս 7/20ին,
 Թիֆլիսի Արքեպիսկոպոսին մէջ: Մասնա-
 խումբը որոշեր է նաև ի լոյս ընծայել ի պատիւ
 Հիւրվանդադէի յօրեկեանական ժողովածու մը՝
 որուն պիտի մասնակցին ռուսահայ, թրքահայ
 և պարսկահայ գրողներ, և մատչելի գնով Ժո-
 ղովրդական հրատարակութիւն մը՝ որ պիտի
 պարունակէ ծաւազարը և կենսագրական ռու-
 սումասիրութիւն մը Հիւրվանդադէի մասին:
 Թրքեկանի օրը՝ հանդիսաւոր թատերական
 ներկայացում տեղի պիտի ունենայ:

Զենք տարակուսի որ աշխարհէն ամէն
 կողմը գտնուող Հայերը պիտի մասնակցին այս
 ազգային-գրական մեծ հանդէսին: Թեպէտ
 տակաւին չընթարեքական չենք ընդունած և
 հասցէ մը չկայ նշանակուած, և կարծենք սա-
 կայն թէ անոնք որ կ'ուզեն յարաբերութեան
 մասնէ կարգադիր մասնախումբին հետ ուղարկելու
 համար ուղբաձ կամ նուիրատուութիւն, կարող
 են դիմել հետեւեալ հասցէին՝

Mr. Ambartsoum Mélikoff.

Tiflis (Caucase, Russie)

Անհրաժեշտ է որ մասնաւորապէս թրքա-

հայ մատուորականութիւնը հանդիսաւորապէս
 մասնակցի ռուսահայ մեծ գրագէտին յօրեկե-
 անին: Ծանկալի էր որ Պոլսէն պատգամաւոր-
 ներ ուղարկուէին, և կամ Թիֆլիսի տունէն
 յետոյ՝ Պոլիս հրաւիրուէր յօրեկեանը և իրեն
 ի պատիւ ցոյց մը կատարուէր նոյն իսկ Պոլսոյ
 մէջ. լաւագոյն է որ այս երկուքն ալ տեղի
 ունենան:

ՏԻԳՐԱՆ ԽԱՆ ՔԵԼԵԿԵԱՆ

ԵՒ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ

Առհիւր ընթերցողները կը յիշեն այն ներքո-
 ղայից գնահատումները որ յայտնուեցան փարիզեան
 մամուլին մէջ՝ Տիգրան Խան Քելեկեանի արեւելեան
 նկարագրող կերպաներու հաւաքածուն ցուցադ-
 րութեան առթիւ և որոնց թարգմանութիւնը հրա-
 տարակցեցին: Յուցահանդէսէն քիչ յետոյ՝ Տիգրան
 Խան այդ կերպաններուն գունաւոր վերադարձու-
 թիւնները պարունակող շքեղ ալպոմ մ'ի լոյս ընծա-
 յեց, որ ահագին յաջողութիւն ունեցաւ Եւրոպայի
 գեղարուեստական շրջանակներուն մէջ և որուն
 յառաջաբանին մէջ, նշանաւոր մասնագէտ Պ. Ժիւլ
 Կիֆրէ կը գրէր հետեւեալը.

«... Արեւելեան կերպաններու հաւաքածուն,
 զոր Պ. Քելեկեան երկար առնէն ի վեր սկսած է
 ճիշտացուցած է, անուարակոյս մին է ամենէն կա-
 րեւորներէն, մին այլպէս տիպերով ամենէն հա-